Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ւ Մ

Խնկոյան համայնքի ավագանու նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Խնկոյան	Համայնքի ավագանու նիստ	25.01.2021թ.	11:30	Խնկոյանի համայնքապետարան (գ. Խնկոյան 1 փ. 19 շ.)

ՆԱԽԱԳԻԾ N1

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2021Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐՈՒԺԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, Խնկոյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Խնկոյան համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 25-ի հերթական նիստի օրակարգը.

1. Խնկոյան համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 25-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին

Զեկ. Վ. Համբարձումյան

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Խնկոյանի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

Զեկ. Վ. Համբարձումյան

3. Խնկոյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի <<Խնկոյան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 35-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

Զեկ. Վ. Համբարձումյան

4. Խնկոյան համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան և զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին.

Զեկ. Վ. Համբարձումյան

5. Խնկոյան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանի մասին:

Զեկ. Վ. Համբարձումյան

6. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

Զեկ. Վ. Համբարձումյան

ՆԱԽԱԳԻԾ N 2-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԽՆԿՈՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐՈՒԺԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով՝ համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Խնկոյանի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի.

2. Ուժը կորցրած ճանաչել Խնկոյան համայնքի ավագանու 23.12.2020 թվականի <<Խնկոյանի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 34-Ա որոշման հավելվածը:

ՆԱԽԱԳԻԾ N 3-Ն

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի <<ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 35-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐՈՒԺԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 5-րդ մասով, 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

Խնկոյան համայնքի ավագանին որոշում է.

1. Խնկոյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի <<Խնկոյան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 35-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ N 4-Ա

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐՈՒԺԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ղեկավարվելով 'Տեղական ինքնակառավարման մասին' Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, 'Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին' Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով՝

Խնկոյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Խնկոյան համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելված N 1-ի:
2. Հաստատել 2020 թվականի Խնկոյան համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելված N 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ N 5-Ա

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐՈՒԺԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ներկայացրած համայնքների տարեկան աշխատանքային պլանների մշակման մեթոդական ուղեցույցը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Խնկոյան համայնքի 2021թ. տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

ՆԱԽԱԳԻԾ N 6-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐՈՒԺԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Խնկոյան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 17-Ա որոշմանը

համապատասխան, հիմք ընդունելով 30.12.2020 թվականին ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի 12.01.2021 թվականի N 1 եզրակացությունը՝ Խնկոյան համայնքի ավագանին

որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակչին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Խնկոյան համայնքի ավագանու

2021 թվականի հունվարի 25-ի N 6-Ա որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԽՆԿՈՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Կարապետ Ավետիսյան Գագիկի	քսանհինգ հազար դրամ, / սոց. օգնություն/,
2. Նվեր Հակոբյան Ալեքսանի	քսանհինգ հազար դրամ, / սոց. օգնություն/,
3. Արթուր Ղազարյան Արտաշեսի	քսանհինգ հազար դրամ, / սոց. օգնություն/: